ԿԱՐԾԻՔ

ՔՆԱՐԻԿ ԿԱՌԼԵՆԻ ԵԴԻԳԱՐՅԱՆԻ «ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.06 - «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ժամանակակից աշխարհում համաշխարհային տնտեսության գլոբալացման և տեխնոլոգիական առաջընթացի պայմաններում մարդկային կապիտալի դերը հետզհետե մեծանում է՝ որպես տնտեսական աճի կարևոր խթան: Այսօր աշխարհի զարգացած երկրների տնտեսական մրցունակության հիմքում մեծապես ընկած են մարդկայն կապիտալում կատարվող ներդրումները, վերջինիս զարգացման տեմպեր հաղորդելու կարողությունը, արդյունավետ կիրառումը տնտեսության մեջ: Նորագույն տեխնոլոգիաների արագընթաց զարգացմանը հարմարվելը դառնում է կենսական պահանջ յուրաքանչյուր տնտեսության համար:

Բացի այդ, աշխարհը կանգնած է նոր մարտահրավերների առաջ, ինչպիսիք են ժողովրդագրական ծերացումը, ծնելիության մակարդակի անկումը, որակավորված աշխատուժի միգրացիան, արհեստական բանականության կիրառման սպառնալիքները՝ կապված գործազրկության մակարդակի ավելացման ահագնացող վտանգի հետ: Այս պայմաններում մեծապես կարևորվում է այս կամ այն երկրի կրթության, առողջապահության և սոցիալական ոլորտներում իրականացվող քաղաքականությունը, որով և պայմանավորվում է համաշխարհային տնտեսությունում երկրի մրցունակ լինելու հանգամանքը:

Հայաստանի Հանրապետությունը, որպես բնական ռեսուրսներով ոչ այնքան հարուստ երկիր, իր զարգացման գործում պետք է հենվի մարդկային կապիտալի զարգացման վրա՝ ուշադրություն դարձնելով հատկապես որակավորված

աշխատուժի միգրացիայի կարգավորման քաղաքականությանը՝ հաշվի առնելով ՀՀ մարդկային կապիտալի դոնոր երկիր հանդիսանալու հանգամանքը:

Այս համատեքստում կարևոր է մարդկային կապիտալի, աշխատաշուկայի ցուցանիշների և միգրացիայի փոխառնչությունների ուսումնասիրությունը, քանի որ տնտեսության գլոբալացման խորացման հետ մեկտեղ շատ երկրներ բախվում են բարձր որակավորում ունեցող մասնագետների արտագաղթին, ինչը ազդում է երկրների մրցունակության և տնտեսական ներուժի վրա: Արդյունքում գլոբալ տնտեսությունը կանգնում է մարդկային կապիտալի խիստ անհավասար բաշխվածության վտանգի առաջ՝ ըստ տարբեր երկրների և տարածաշրջանների՝ խաթարելով համաշխարհային տնտեսության հավասարակշիռ զարգացումը:

Մյուս կողմից՝ մարդկային կապիտալի միգրացիան կարող է մեխանիզմ դառնալ երկրների միջև գիտելիքների, փորձի և նորարարությունների փոխանցման, տեխնոլոգիական զարգացման խթանման և տնտեսական ցուցանիշների բարելավման համար և, այս առումով, մարդկային կապիտալի միգրացիայի ուսումնասիրությունն ու կառավարումը մնում են արդիական ցանկացած երկրի տնտեսական զարգացման և սոցիալական քաղաքականության համատեքստում:

Վերոնշյալը ընդգծում է աշխատանքի արդիականությունն ու անհրաժեշտությունը մարդկային կապիտալի զարգացման արդյունավետ քաղաքականություն մշակելու և հասցեական ռազմավարություն որդեգրելու տեսանկյունից:

Աշխատանքի կառուցվածքը հնարավորություն է ընձեռում բացահայտել հետազոտական թեմայի բնութագրական կողմերը, առաջադրված նպատակներն ու դրանց հասնելու համար դրված խնդիրները, վերջիններիս լուծման ուղիները, առաջադրված մոտեցումների գործնական կիրառելիությունը:

Ատենախոսության ներածությունը նկարագրում է կատարված հետազոտության արդիականությունը, հետազոտության նպատակը, վերջինիս հասնելու համար հեղինակի առաջ դրված խնդիրները: Ներկայացված են նաև

հետազոտության արդյունքում ստացված գիտական նորույթները, որոնցով աշխատանքը ձեռք է բերում գիտական արժեք, նկարագրված են ընտրված տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, հետազոտության կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Մարդկային կապիտալի տեսության տեսամեթոդական հիմնադրույթները» գլխում անրադարձ է կատարվել մարդկային կապիտալի հայեցակարգի էվոլյուցիային՝ նկարագրելով տվյալ եզրույթի առաջացման և զարգացման վերաբերյալ տնտեսագիտական տարբեր դպրոցների և տեսաբանների մոտեցումները, քանի որ ի տարբերություն արտադրության այլ գործոնների՝ մարդկային կապիտալը ժամանակի ընթացքում փոփոխվում է ոչ միայն քանակապես և որակապես, այլև ըստ էության և բովանդակային իմաստով: Արդյունքում հեղինակի կողմից ձևակերպվել է «մարդկայն կապիտալ» եզրույթի ժամանակագրական էվոլյուցիան՝ յուրաքանչյուր փուլին հատուկ դրսևորումների նկարագրով: Քննարկվել է նաև մարդկային կապիտալի էությունը և կառուցվածքը, դրա տարբեր տեսակները, դասակարգման մոտեցումները: Մարդկային կապիտալի գնահատման մոտեցումները ևս ուշադրության են արժանացել սույն գլխում՝ որպես ոչ ստանդարտ, ոչ ճշգրիտ գործիք, որի չափելիությունը մշտապես գտնվել է տնտեսագետների ուշադրության կենտրոնում և փոփոխվել հետազոտության վերջնական նպատակից կախված: Ի վերջո ուսումնասիրելով մարդկային կապիտալի գնահատման մոտեցումները՝ հեղինակի կողմից ընտրվել է հետագա վերլուծություններում առավել կիրառելի բանաձևային մեթոդը:

Ատենախոսության երկրորդ՝ «Մարդկային կապիտալը համաշխարհային տնտեսությունում» գլխում համապարփակ ուսումնասիրության են ենթարկվել Համաշխարհային բանկի կողմից հաշվարկվող մարդկային կապիտալի և ՄԱԿ-ի կողմից հաշվարկվող մարդկային զարգացման համաթվերը՝ որպես մարդկային կապիտալի գնահաման գործիքներ: Բացահայտվել են վերջիններիս հաշվարկման մեթոդաբանությունները, զարգացման էվոլյուցիան, դրական և բացասական

կողմերը, սահմանափակումները, այդ թվում՝ առանձին անդրադարձ է կատարվել համաթվերի մեջ ներառված բոլոր չափանիշներին ՀՀ-ի և առանձին երկրների համար: Հետազոտված վիճակագրական տվյալների հիման վրա վեր են հանվել այն քանակական միտումները, որոնք առկա են ներկայումս համաշխարհային տնտեսությունում մարդկային կապիտալի տեսանկյունից: Վերոնշյալ համաթվերի թերությունները հաշվի առնելով՝ հեղինակի կողմից առաջ է քաշվել մարդկային կապիտալի հաշվարկի նոր եղանակ՝ նոր բանաձևային մեթոդ, որը թույլ է տալիս առավել համապարփակ քննության ենթարկել մարդկային կապիտալի հետ կապված տիրող իրավիճակը տարբեր երկրներում: Նույն գլխում ուսումնաիրվել են նաև մարդկային կապիտալի ժամանակակից որակական միտումները, նոր մարտահրավերները, զարգացած երկրների մոտեցումները, որոնց փորձը արժեքավոր կարող է լինել նաև զարգացող տնտեսություն ունեցող երկրներում:

Ատենախոսության երրորդ՝ «Մարդկային կապիտալի զարգացման հիմնախնդիրները ՀՀ տնտեսության միջազգայնացման պայմաններում» գլխում մանրամասն նկարագրվել են Հայաստանի Հանրապետության՝ մարդկային կապիտալին առնչվող ոլորտներն ընդգրկող հիմնախնդիրները՝ անդրադառնալով առողջապահության, կրթության և սոցիալական պաշտպանության ոլորտներում առկա խնդիրներին, բացերին, դրական կողմերին՝ ուսումնասիրելով նշվածին առնչվող վիճակագրական տվյալները: Արդյունքում բացահայտվել են մարդկային կապիտալի զարգացման հեռանկարները ՀՀ տնտեսության միջազգայնացման համատեքստում, հետազոտվել միգրացիայի ազդեցությունը երկրի աշխատաշուկայի վրա, քննվել են միգրացիայի դրական և բացասական ազդեցությունները դոնոր և ռեցիպիենտ երկրների տնտեսությունների վրա:

Հիմնվելով մարդկային կապիտալի գնահատման մոտեցումների և հետազոտության արդյունքների վրա՝ բացահայտվել են, թե ինչպիսի գործոններ են նշանակալի ազդեցություն ունենում մարդկային կապիտալի միգրացիայի վրա և կառուցվել է համապատասխան մոդել: Արդյունքում գնահատվել է ՀՀ մարդկային

կապիտալի միգրացիայի վրա ազդող ցուցանիշների համակարգը՝ ՀՀ և ռեցիպիենտ երկրների համար, գնահատվել է ՀՀ մարդկային կապիտալի միգրացիայի վրա ՀՀ և ռեցիպիենտ երկրների տնտեսական ցուցանիշների միջև եղած ճեղքվածքի ազդեցության չափը, գնահատվել է ՀՀ և ռեցիպիենտ երկրների ՄԿ-ի միջև ճեղքվածքը՝ պայմանավորված եկամուտների, աշխատուժի թերօգտագործման և աշխատաշուկայում ներգրավվածության մակարդակների տարբերություններով՝ կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքներով, այսինքն՝ կատարվել է մարդկային կապիտալի շարժունության վերլուծություն:

Ատենախոսության **եզրակացությունների և առաջարկությունների** հատվածում ափոփվել են և հակիրճ ձևակերպվել հետազոտության արդյունքում ստացված հիմնական եզրահանգումներն ու առավել արժեքավոր առաջարկները:

Աշխատանքի **գիտական նորույթը** կայանում է նրանում, որ հեղինակը կատարել է մարդկային կապիտալի և մարդկային զարգացման համաթվերի համեմատական վերլուծություն՝ հիմնավոր ձևակերպելով այն խնդիրներն ու թերացումները, որոնք առկա են վերոնշյալ համաթվերի գնահատման մեթոդաբանության մեջ և առաջարկել մարդկային կապիտալի գնահատման նոր մոտեցում, որը հնարավորություն է տալիս առավել համապարփակ գնահատել մարդկային կապիտալը՝ որպես տնտեսության զարգացման գործոն: Առաջարկված նոր բանաձևային մեթոդը ընգրկում է ոչ միայն կրթության և առողջապահության ցուցանիշներ, այլև աշխատաշուկայի, ազգային հաշիվների և սոցիալական ոլորտի ցուցանիշներ, որոնք էապես ազդում են անհատի արտադրողականության վրա: Նոր ցուցանիշը նաև հնարավորություն է ընձեռում առավել տրամանաբորեն համեմատել տարբեր երկրներում՝ մարդկային կապիտալի կիրառման արդյունավետության մակարդակը և առավել հասցեական լուծումներ առաջարկել առանձին երկրներում ցուցանիշների բարելավման համար:

Հեղինակի կողմից գնահատվել է ՀՀ մարդկային կապիտալի միգրացիայի վրա ազդող ցուցանիշների համակարգը՝ ՀՀ և ռեցիպիենտ երկրների համար: Արդյունքում

պարզվել է, որ աշխատաշուկայի որոշ ցուցանիշներ և բնակչության եկամուտների մակարդակը ազդում են մարդկային կապիտալի միգրացիայի վրա:

Հեղինակը պանելային վեկտորային ավտոռեգրեսիոն մոդելի միջոցով գնահատել է, թե ի՞նչ փոխառնչություններ են առկա մարդկային կապիտալի, միգրացիայի, եկամուտների, աշխատուժի թերօգտագործման և աշխատաշուկայում ներգրավվածության մակարդակների միջև, և թե որքանո՞վ են դոնոր և ռեցիպիենտ երկրներում նշյալ ցուցանիշների ճեղքերը ազդում միմյանց վրա: Մանավորապես, նախ գնահատվել է, թե ինչպես է միգրացիայի ճեղքն ազդում նշյալ ցուցանիշների վրա, այնուհետև թե ինչպես են տվյալ ցուցանիշներն ազդում դոնոր և ռեցիպիենտ երկրների միգրացիայի ճեղքի վրա: Նույնը կատարվել է նաև մարդկային կապիտալի համար:

Հետազոտության արդյունքները ընձեռում են լայն հնարավորություն ՀՀ մարդկային կապիտալի միջազգայնացման հիմնախնդրի լուծման տեսնակյունից:

Ատենախոսության գիտագործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել մարդկային կապիտալի դոնոր հանդիսացող երկրներում, այդ թվում Հայաստանի Հանրապետությունում վերջինիս զարգացման ռազմավարությունը մշակելիս՝ ուշադրություն դրածնելով այն պատճառահետևանքային կապերին, որոնք առկա են մարդկային կապիտալի միգրացիայի և տնտեսական այլ ցուցանիշների միջև, ինչպես նաև մարդկային կապիտալի հետ կապված այլ հետազոտություններում, որոնք կարող են նպաստել վերջինիս զարգացմանը միտված հասցեական քաղաքականության մշակմանը:

Միևնույն ժամանակ, ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրություններն ու վերլուծությունները զերծ չեն թերություններից, և այդ առնչությամբ կատարված դիտողությունները պետք է արժանանան հեղինակի ուշադրությանը քննարկվող թեմայով հետագա ուսումնասիրությունները շարունակելու դեպքում: Դրանք են՝

1. Ատենախոսությունը էապես կշահեր, եթե հեղինակի կողմից իրականացվեր համադրելի տնտեսական և ժողովրդագրական պայմաններ ունեցող երկրների միջազգային փորձի վերլուծություն, որոնք հաջողությամբ զարգացրել են իրենց մարդկային կապիտալը միջազգայնացման համատեքստում և ներկայացվեր արժեքավոր մոտեցումներ, արդյունավետ և գործուն մեխանիզմներ Հայաստանի Հանրապետության քաղաքականությունը ուղղորդելու համար:
2. Հետազոտությունը առավել արժեքավոր կլիներ նաև, եթե հեղինակը մշակեր և ներկայացներ իրատեսական և գործուն ռազմավարության նախագիծ, որը ուղղված կլիներ մարդկային կապիտալի զարգացմանը Հայաստանի Հանրապետությունում՝ ընդգրկելով քաղաքականություն մշակողներին, կրթական և գիտական հաստատություններին, գործարար հատվածին:
3. Աշխատանքը էապես կշահեր, եթե հեղինակը որոշակի անդրադարձ կատարեր նաև ԵԱՏՄ անդամակցության արդյունքում երրորդ երկրների հետ կապված աշխատուժի միգրացիայի կարգավորման հիմնախնդիրներին:
4. Աշխատանքում առկա են մի շարք տեխնիկական վրիպակներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված դիտողությունները չեն ազդում հետազոտության արդյունքների վրա և չեն նվազեցնում աշխատանքի գիտական արժեքը, սակայն դրանք կարող են հիմք ծառայել հեղինակի հետագա գիտական ուսումնասիրությունների համար:

Քնարիկ Կառլենի Եդիգարյանի թեկնածուական ատենախոսությունն արժանավորվում է հստակ տրամաբանական կառուցվածքով և գրագետ շարադրանքով: Հեղինակը հանդես է բերել մասնագիտական լուրջ գիտելիքներ ու վերլուծական բավականաչափ խորը կարողություն, ինչի մասին են վկայում ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները: Հետազոտության արդյունքները միանգամայն կարելի է գնահատել որպես նորովի մոտեցում վերոնշյալ հարցադրումների շրջանակներում:

Մշակված մոտեցումները ու կատարված առաջարկությունները իրենցից ներկայացնում են ՀՀ տնտեսության միջազգայնացման համատեքստում մարդկային կապիտալի զարգացման հիմնախնդիրների կարգավորման գիտականորեն հիմնավորված գործնական մոտեցումներ:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի դրույթներն ու արդյունքները: Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են թվով 10 հոդվածներում:

Քնարիկ Կառլենի Եդիգարյանի «Մարդկային կապիտալի զարգացման հիմնախնդիրները ՀՀ տնտեսության միջազգայնացման համատեքստում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ ԲԿԳԿ կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող այլ պահանջներին, ուստի հեղինակն արժանի է Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության թեկնածու Լ.Կ. Սարգսյան

Լ. Կ. Սարգսյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Շ. Գրիգորյան

24.06.2024 թ.